ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային 1
+374 12 88 88 88
info@ligainsurance.am
ligainsurance.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԺՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԾՐԱԳԻՐ / TREATMENT ABROAD INSURANCE PROGRAM

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ / SCHEDULE OF BENEFITS

Տարբերակներ **Options**		**Բացատրություն** **Definitions**
Աշխարհագրական տարածք **Geographical area of cover**	Ամբողջ աշխարհ, բացառությամբ ԱՄՆ-ի և Հայաստանի Worldwide Excluding USA and Armenia	**Ապահովագրության աշխարհագրական տարածքը** սահմանում է, թե որ երկրներում **Դուք** կարող եք **բուժում** ստանալ: The **geographical area** of the **Insurance** determines where **you** may receive **treatment**.
Փաթեթ **Plan option**		**Մենք** վճարելու ենք **Ապահովագրության պայմանագրով** սահմանված ծառայությունների գծով ծախսերը՝ ընդամենը տարեկան առավելագույն ապահովագրական գումարի չափի և սահմանված ենթասահմանաչափերի շրջանակներում: **We** will pay for the cost of **benefits** allowable under the **Agreement** subject to the overall annual maximum and any specified sub-limits.
Սպասման ժամկետներ **Waiting Periods**	180 օր ֆիզիկական անձանց համար: 90 օր նորածինների համար, 90 օր իրավաբանական անձանց համար՝ բժշկական պատմությունը ներկայացնելու պայմանով: 180 Days for individuals. 90 days for newborn children, 90 days for corporate clients upon medical history provision.	**Ապահովագրության պայմանագրի** ուժի մեջ մտնելուց հետո **Սպասման ժամկետի** ընթացքում տեղի ունեցած պատահարները ենթակա չեն հատուցման: Պայմանագրերի վերակնքման պարագայում սպասման ժամկետ չի կիրառվելու: No **benefit** can be claimed within the **Waiting Period** specified following the commencement date. Waiting period will be cancelled for existing policies.

Տարեկան առավելագույն սահմանաչափ **Annual Maximum**	€500,000	**Ձեր Ապահովագրության պայմանագրի** համաձայն **ծառայությունների գծով** ընդամենը առավելագույն սահմանաչափ՝ յուրաքանչյուր **ապահովագրված անձի,** յուրաքանչյուր ապահովագրության գործողության ժամկետի համար, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով: Overall maximum **benefit limit** of **your Policy** per **insured person**, per **period of cover,** unless otherwise specified.
Սահմանաչափ ամբողջ կյանքի ընթացքում **Lifetime Maximum**	€1,000,000	Բոլոր **ծառայությունների գծով** ընդամենը առավելագույն սահմանաչափ՝ Ձեր ամբողջ կյանքի ընթացքում կնքված բոլոր **պայմանագրերի** գծով: Overall maximum **benefit limit** that **you** can claim through the lifetime of **your Policy**.
Թարգմանչական ծառայություններ **Tranlator services**	Ամբողջությամբ In full	Մենք կկազմակերպենք թարգմանչի ուղեկցություն Ձեր ամբուլատոր և/կամ ստացիոնար բուժման ընթացքում: We will arrange that an interpreter accompanies you during your outpatient and/or inpatient treatment.
Քաղցկեղի բուժում **Cancer treatment**	Ամբողջությամբ In full	**Քաղցկեղի** ախտորոշման դեպքում **ստացիոնար, ցերեկային ստացիոնար և ամբուլատոր** բուժում: **Հատուցվող ծառայությունները** ներառում են՝ **Խորհրդատու ուռուցքաբանի** ծառայության վճար Վիրահատություն Ռադիոթերապիա և քիմիաթերապիա՝ առանձին կամ միասին, ինչպես նաև բուժման համար անհրաժեշտ բոլոր նշանակված **դեղամիջոցները, վիրակապային նյութերը** **Մեր** կողմից ընտրված անկախ ախտորոշիչ կենտրոնում լրացուցիչ գենետիկական հետազոտման ծառայություն **ապահովագրված անձի** գենոմի հիման վրա առավելագույն համապատասխանող բուժում ընտրելու նպատակով **Ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար կացություն և սնունդ** ստանդարտ առանձնասենյակում՝ **բուժհաստատությունում** գտնվելու անհրաժեշտության դեպքում, կացության տևողության բժշկական անհրաժեշտության վերաբերյալ որոշումը կայացնում է և **բուժումը** իրականացնում է խորհրդատու **ուռուցքաբանը/ մասնագետը** Ուղեկցողի/խնամողի համար նախատեսված մահճակալ, եթե տվյալ **բուժհաստատությունը** ունի նման ծառայություն և այն փոխարինում է կացությունը հյուրանոցում **Treatment** given for diagnosed **cancer** received as an **in-patient**, **day-patient** or **out-patient**. **Cover** includes: Consultant oncologist fees Surgery Radiotherapy and chemotherapy, alone or in combination as well as any prescribed drugs and dressings required to treat the medical condition. The cost of an optional genomic profiling service provided by an independent diagnostics provider selected by us, used to identify the most appropriate therapy according to the insured person's genome. The cost of in-patient or day-patient room and board in a standard private room when a stay in hospital is medically necessary, the length of stay is judged medically appropriate and treatment is managed by a consultant oncologist/specialist. The costs of a companion bed where the hospital provides this service and it is in place of a hotel bed. Եթե **Ապահովագրված անձը** նախընտրում է վերադառնալ իր **մշտական բնակության երկիր՝ հատուցվող քաղցկեղի ամբուլատոր բուժման** համար, մենք կշարունակենք **բժշկական տեսակետից անհրաժեշտ** ակտիվ **բուժման հատուցումը՝** մինչև ամբողջական ապաքինումը սույն **ծառայության** համաձայն : If the **insured person** elects to return to his **country of residence** to receive **out-patient treatment** for an eligible **cancer**, We will continue to **cover** the active

		medically necessary treatment to cure this **medical condition** in full, under this **benefit**.
Կորոնար շունտավորում **Coronary artery** **by-pass**	Ամբողջությամբ In full	**Խորհրդատու սրտաբանի** հսկողությամբ անցկացվող **վիրահատություն՝** մեկ կամ մի քանի պսակաձև զարկերակի խցանվված հատվածը շրջանցելու համար շունտերի օգտագործմամբ: **Հատուցվում են խորհրդատու սրտաբանի** ծառայության դիմաց վճարները**, վիրահատությունը**, դրա հետ կապված **ստացիոնար կացությունը** և **բուժման** ընթացքում նշանակված **դեղորայքի և վիրակապային նյութերի** արժեքը: **Surgery** under the supervision of a **consultant cardiologist** to correct the blockage of one or more coronary arteries using by-pass grafts. **Cover** includes **consultant cardiologist** fees, **surgery**, associated **in-patient** costs and prescribed **drugs and dressings** required to treat the **medical condition**. **Հատուցվում են ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար կացությունը և սնունդը** ստանդարտ առանձնասենյակում՝ **բուժհաստատությունում** գտնվելու բժշկական անհրաժեշտության դեպքում, կացության տևողության **բժշկական անհրաժեշտության** վերաբերյալ որոշումը կայացնում է և **բուժումն** իրականացնում է **մասնագետը**: **Մենք** նաև **հատուցում ենք** ուղեկցողի/խնամողի համար նախատեսված մահճակալը, եթե տվյալ **բուժհաստատությունը** ունի նման ծառայություն և այն փոխարինում է կացությունը հյուրանոցում: **Cover** includes the cost of **in-patient** or **day-patient room and board** in a standard private room when a stay in **hospital** is **medically necessary**, the length of stay is judged medically appropriate and **treatment** is managed by a **specialist. We** also **cover** the costs of a companion bed where the **hospital** provides this service and it is in place of a hotel bed.
Սրտի փականի փոխարինում **Heart valve replacement**	Ամբողջությամբ In full	Խորհրդատու սրտաբանի կողմից հսկվող վիրահատություն սրտի մեկ կամ մի քանի փականներ փոխարինելու կամ վերականգնելու նպատակով: Ներառում է խորհրդատուի ծառայությունների ծախսերը, վիրահատության և հետագա ստացիոնար ծախսերը, բուժման ընթացքում նշանակված դեղորայքի և վիրակապային նյութերի ծախսերը: Surgery, under the supervision of a consultant cardiologist to replace or repair one or more heart valves. Includes consultant fees, surgery, associated inpatient costs, and prescribed drugs and dressings required to treat the medical condition. **Հատուցվում են ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար կացությունը և սնունդը** ստանդարտ առանձնասենյակում՝ **բուժհաստատությունում** գտնվելու բժշկական անհրաժեշտության դեպքում, կացության տևողության **բժշկական անհրաժեշտության** վերաբերյալ որոշումը կայացնում է **և բուժումն** իրականացնում է **մասնագետը**: **Մենք** նաև **հատուցում ենք** ուղեկցողի/խնամողի համար նախատեսված մահճակալը, եթե տվյալ **բուժհաստատությունը** ունի նման ծառայություն և այն փոխարինում է կացությունը հյուրանոցում: **Cover** includes the cost of **in-patient** or **day-patient room and board** in a standard private room when a stay in **hospital** is **medically necessary**, the length of stay is judged medically appropriate and **treatment** is managed by a **specialist. We** also **cover** the costs of a companion bed where the **hospital** provides this service and it is in place of a hotel bed.

Օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստում կենդանի դոնորից **Live-donor organ or tissue replacement**	Ամբողջությամբ In full	**Բուժում,** որը կապված է և որի նպատակն է **ապահովագրված անձին** որպես ռեցիպիենտ փոխպատվաստել մարդու երիկամ, լյարդի սեգմենտ, թոքի բլիթ կամ ոսկրածուծ մեկ այլ կենդանի դոնորից, որն անց է կացվում միջազգային հավատարմագրված հաստատությունում հավատարմագրված վիրաբույժների կողմից և օրգանի գնումը համապատասխանում է համաշխարհային առողջապահական կազմակերպության (ՀԱԿ) ուղեցույցներին: **Treatment** for and in relation to a human organ transplant of kidney, segment of liver, or pulmonary lobe in respect of the **insured person** as a recipient, carried out in internationally accredited institutions by accredited surgeons and where the organ procurement is in accordance with world heath organisation (WHO) guidelines. Հատուցվում են դոնորի հետ կապված բժշկական ծախսերը միայն գործընկեր բուժհաստատություններում **ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար** բուժման պարագայում, եթե դոնորությունը չի ենթադրում դոնորի կյանքի ընդհատում, և դոնորի օրգանի հեռացումն ու փոխպատվաստումը տեղի են ունենում միևնույն հաստատությունում: Medical costs associated with the donor as an **in-patient** or **day-patient** in network facilities only, where the donation does not lead to a loss of the donors life, and the donating organ is removed in the same facility that the transplant is taking place. Բացի այդ **մենք կհատուցենք Ձեր բժշկի** կողմից առաջարկած պոտենցյալ դոնորների համատեղելիությունը ստուգելու համար անհրաժեշտ թեստավորման ծախսերը: **We** will also **cover** the cost of the test required to assess the compatibility of the potential donors being considered, as referred by **your** treating **specialist**. **Հատուցվում են ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար կացությունը և սնունդը** ստանդարտ առանձնասենյակում՝ **բուժհաստատությունում** գտնվելու **բժշկական անհրաժեշտության** դեպքում, կացության տևողության **բժշկական անհրաժեշտության** վերաբերյալ որոշումը կայացնում է և բուժումն իրականացնում է **մասնագետը**: **Մենք** նաև **հատուցում ենք** ուղեկցողի/խնամողի համար նախատեսված մահճակալը, եթե տվյալ **բուժհաստատությունը** ունի նման ծառայություն և այն փոխարինում է կացությունը հյուրանոցում: **Cover** includes the cost of **in-patient** or **day-patient room and board** when a stay in **hospital** is **medically necessary**, the length of stay is judged medically appropriate and **treatment** is managed by a **specialist. We** also **cover** the costs of a companion bed where the **hospital** provides this service and it is in place of a hotel bed.
Նյարդավիրա-բուժություն **Neurosurgery**	Ամբողջությամբ In full	Ուղեղի կամ ցանկացած ներգանգային այլ հատվածների վրա կատարվող ցանկացած վիրաբուժական միջամտություն և ողնուղեղի բարորակ ուռուցքների վիրահատական բուժում, որն իրականացվում է խորհրդատու նյարդավիրաբույժի հսկողության ներքո: Ներառում է խորհրդատվական ծառայության ծախսեր, վիրահատության և դրա հետ կապված ստացիոնար ծախսեր, բուժման ընթացքում նշանակված դեղորայքի և վիրակապային նյութերի ծախսեր: Surgery, under the supervision of a consultant neurosurgeon to treat a medical condition effecting the brain or any other intracranial structures and surgical treatment of benign tumours located on the spinal cord. Includes consultant

		neurosurgeon fees, surgery, associated in-patient costs and prescribed drugs and dressings required to treat the medical condition. **Հատուցվում է** ստանդարտ առանձնասենյակում **ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար կացություն և սնունդ բուժհաստատությունում** գտնվելու անհրաժեշտության դեպքում, կացության տևողությունը սահմանվում է ըստ **բժշկական անհրաժեշտության,** կացության տևողության **բժշկական անհրաժեշտության** վերաբերյալ որոշումը կայացնում է և բուժումն իրականացնում է **մասնագետը**: Բացի այդ **մենք կհատուցենք** ուղեկցողի/խնամողի համար նախատեսված տեղը, եթե տվյալ **բուժհաստատությունը** ունի նման ծառայություն և այն փոխարինում է կացությունը հյուրանոցում: **Cover** includes the cost of **in-patient** or **day-patient room and board** in a standard private room when a stay in **hospital** is **medically necessary**, the length of stay is judged medically appropriate and **treatment** is managed by a **specialist. We** also **cover** the costs of a companion bed where the **hospital** provides this service and it is in place of a hotel bed.
Ոսկրածուծի փոխպատվաստում **Bone Marrow Transplant**	Ամբողջությամբ In full	Ոսկրածուծի բջիջների ֆունկցիայի խանգարմանը կամ արյան քաղցկեղին հանգեցնող հիվանդությունների ստացիոնար բուժում (լեյկեմիա, ապլաստիկ անեմիա), որը պահանջում է աուտոլոգիկ կամ ալոգենիկ ոսկրածուծի փոխպատվաստում, ներառյալ՝ ոսկրածուծի հեմատոպոետիկ ցողունային բջիջների փոխպատվաստումը (BMHSC) կամ պերիֆերալ արյան ցողունային բջիջների փոխպատվաստումը (PBSCT), պորտալարային հեմատոպոետիկ ցողունային բջիջների փոխպատվաստում: In-patient treatment for diseases which result in bone marrow failure or blood cancers (eg: leukemia, aplastic anemia) that requires autologous or allogeneic bone marrow transplant, to the insured person, including Bone Marrow Hematopoietic Stem Cell (BMHSC), Peripheral Blood Stem Cell Transplantation (PBSCT), Core Hematopoietic Stem Cell (CMHSC). Հատուցվում է ստանդարտ առանձնասենյակում ստացիոնար կամ ցերեկային ստացիոնար կացություն և սնունդ բուժհաստատությունում գտնվելու բժշկական անհրաժեշտության դեպքում, կացության տևողության բժշկական անհրաժեշտության վերաբերյալ որոշումը կայացնում է և բուժումն իրականացնում է մասնագետը: Բացի այդ մենք կհատուցենք ուղեկցողի/խնամողի համար նախատեսված տեղը, եթե տվյալ բուժհաստատությունը ունի նման ծառայություն և այն փոխարինում է կացությունը հյուրանոցում: Cover includes the cost of in-patient or day-patient room and board when a stay in hospital is medically necessary, the length of stay is judged medically appropriate and treatment is managed by a specialist. We also cover the costs of a companion bed where the hospital provides this service and it is in place of a hotel bed.
Ուղևորության ծախսեր Ձեր և Ձեզ ուղեկցողի/ խնամողի համար **Travel costs for you and a companion**	Մինչև €25,000 (էկոնոմ դաս) Up to €25,000 (economy class)	**Մենք** պետք է զբաղվենք բոլոր կազմակերպչական հարցերով: **Մենք** պատասխանատվություն ենք կրում ընտրել Ձեր ուղևորության ամսաթվերը՝ համաձայնեցված **բուժման** ծրագրի հետ : Ծածկույթի տվյալ կետը նախատեսում է հետևյալ ծախսերի հատուցումը. **ապահովագրված անձի** տեղափոխումը բնակության վայրից կամ **բուժհաստատությունից** օդանավակայան/ երկաթուղային կայարան և, այնուհետև, կոմերցիոն ավիափոխադրողի միջոցով՝ դեպի **Ձեր** կողմից նախընտրած երկիր (եթե **բուժող բժշկի/բժիշկ-մասնագետի** և **մեր** կարծիքով **Ձեր** առողջական վիճակը թույլ է տալիս նման

		ճանապարհորդություն)՝ **բուժհաստատությունում ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար** բուժումն անցնելու նպատակով: All arrangements must be made by **us**. **We** will be responsible for choosing the dates of travel based on the agreed **treatment** plan. This benefit provides cover for the costs of an **insured person** to be transported from their home address or **hospital** to the airport/ train station and there forward, by a commercial airline to the country of **your** choice (if, in the opinion of the **medical practitioner/specialist** and **us** that **you** are in the appropriate medical position to be able to undertake the journey), for the purpose of admission to **hospital** as an **in-patient** or **day-patient**. **Մենք** կվճարենք հետևյալ ողջամիտ ծախսերի համար. • **Մեր** կողմից կազմակերպված **Ձեր** և **Ձեզ** ուղեկցողի/խնամողի և/կամ դոնորի (անհրաժեշտության դեպքում) տեղափոխումը՝ թե՛ միակողմանի և թե՛ երկկողմանի թռիչքի դեպքում **բուժհաստատությունից** դուրս գրվելուց հետո • Հատուցման ենթակա է յուրաքանչյուր հատուցվող առողջական վիճակի կապակցությամբ հետադարձ ավիափոխադրումը՝ **ապահովագրված անձի** և մեկ ուղեկցողի համար • Դոնորի (անհրաժեշտության դեպքում) կոմերցիոն ավիաչվերթով երկկողմանի ավիափոխադրում • Տեղային ճանապարհածախսը դեպի բուժհաստատություն և հետ՝ **ցերեկային ստացիոնարում բուժման** պարագայում • Ուղեկցող անձի ողջամիտ ճանապարհային ծախսերը **ապահովագրված անձին բուժհաստատությունում** այցելելու նպատակով՝ **ստացիոնար** բուժման պարագայում: Տվյալ **ծառայությունը** չի ներառում **փրկարարական** ծառայությունները օդային/ծովային/լեռնային վայրերից և հասանելի է միայն Ձեր **Ապահովագրության պայմանագրում** սահմանված **աշխարհագրական տարածքում**: **Ձեր** հետ վերադարձը պետք է իրականացվի այն ժամանակ, երբ **Դուք** բժշկական տեսանկյունից ի վիճակի կլինեք ճանապարհորդելու և հետագա **ցերեկային ստացիոնար** կամ **ամբուլատոր բուժումը** կարող եք շարունակել **Ձեր մշտական բնակության երկրում**: **We** will pay reasonable expenses for: Travel arranged by **us** to transport **you, your** companion and/ or donor (where relevant) at either side of the out-bound and return flight following discharge from **hospital** Return flights on a commercial airline for the **insured person** and one companion per eligible medical condition. Return flights on a commercial airline for the donor (where relevant). Local travel costs to and from medical appointments when **treatment** is being received as a **day-patient**. Reasonable travel costs to enable a locally-accompanying person to visit the **insured person** in **hospital** following admission as an **in-patient**. This **benefit** does not extend to include **emergency** air/sea rescue or mountain rescue services. Only available within the **geographical area** of **your policy**. **Your** return must be as soon as **you** are medically fit to fly and any ongoing **day-patient** and/or **out-patient treatment** can be undertaken in **your country of residence.**
Կացության ծախսերը Ձեր և Ձեզ ուղեկցողի/խնամողի համար (ուղևորության սահմանաչափի շրջանակներում)	Մինչև €10,000 Up to €10,000	**Մենք** պետք է զբաղվենք բոլոր կազմակերպչական հարցերով և կընտրենք ձեր կացության համար տարբերակ՝ առաջնորդվելով ստանդարտ սենյակների ողջամիտ գներով: **Մենք կհատուցենք** ստանդարտ հյուրանոցային սենյակի գծով ծախսերը **ապահովագրված անձի** համար և, անհրաժեշտության դեպքում, ուղեկցողի/խնամողի և/կամ դոնորի համար՝ անմիջապես բուժհաստատություն ընդունվելուց առաջ և դուրս գրվելուց հետո ընկած ժամանակահատվածում՝ հաշվի առնելով, որ **ապահովագրված անձը** և

Accommodation costs for you and a companion (within travel limit)		անհրաժեշտության դեպքում՝ դոնորը գտնվելու են **մասնագետի** հսկողության տակ՝ դուրս գրվելուց հետո մինչև յոթ օրվա ընթացքում **ամբուլատոր** կամ **ցերեկային ստացիոնար** եղանակներով **բուժման** իրականացման դեպքում: All arrangements must be made by **us** and accommodation will be selected based on reasonable standard room rates. **We** will **cover** the cost of a standard hotel room, for the **insured person**, and where applicable, for the companion and/or donor, immediately pre and post-**hospital** admission periods provided that the **insured person** (and where relevant, the donor) is under the care of a **specialist** for a period of up to seven days post discharge from **hospital**. Where **treatment** is received as an **out-patient** or **day-patient**. Ի լրումն վերը նշվածի, ուղեկցողի/խնամողի կացությունը ստանդարտ հյուրանոցային սենյակում հատուցվելու է այնքան ժամանակ, որքան կպահանջվի **ապահովագրված անձի բուժհաստատությունում** գտնվելու համար, այն պարագայում, երբ **բուժհաստատությունը** չի կարող տրամադրել ուղեկցողին մահճակալ: In addition, companion accommodation in a standard hotel room will be covered for the duration that the **insured person** is confined in **hospital** in circumstances where the **hospital** is unable to offer a companion bed.
Ստացիոնար/ բուժհաստատությունում կատարված ծախսեր **In-patient/ hospital charges**	Ամբողջությամբ In full	Տվյալ **ծառայության** հատուցումը կիրառելի է միայն **Ապահովագրության պայմանագրով** սահմանված **առողջական վիճակի բուժման** համար և ներառում է հետևյալը. **ստացիոնար** կամ **ցերեկային ստացիոնար բուժման** ծախսեր, այդ թվում՝ **կացության և սնունդի** ապահովումը ստանդարտ առանձնասենյակում, ինտենսիվ թերապիայի/ վերակենդանացման բաժանմունքում կամ հետվիրահատական բաժանմունքում գտնվելու ծախսերը, **ախտորոշիչ հետազոտություններ,** վիրահատարանի վճար, վիրաբույժի և անեսթեզիոլոգի վճար, **բուժող բժշկի/բժիշկ-մասնագետի** ծառայությունների վճար, **որակավորված բուժքրոջ** ծառայության վճար, **բուժող բժշկի** կամ **բժիշկ-մասնագետի** կողմից դուրս գրված **դեղամիջոցների և վիրակապային նյութերի** ծախսեր, ինչպես նաև անհրաժեշտ **տնային օգտագործման բժշկական սարքավորումների** վճար: This **benefit** is only applicable in relation to the **treatment** of **medical conditions** covered under the **Policy.** Charges for **in-patient** or **day-patient treatment** made by a **hospital** including charges for **room and board** in a standard private room, intensive care unit (ICU) or high dependency unit (HDU) costs, **diagnostic tests**, operating theatre charges, surgeon and anaesthetist charges, **medical practitioner/specialist** fees, costs of a **qualified nurse** and **drugs and dressings** as prescribed by a **medical practitioner** or **specialist** and any **durable medical equipment** required.
Նախավիրահատա-կան ամբուլատոր բուժում և մինչ հոսպիտալացումը անհրաժեշտ բուժում **Pre-operative out-patient treatment and necessary prehospitalisation treatment**	Ամբողջությամբ In full	**Մենք** կվճարենք **ամբուլատոր բուժման** գծով ծախսերը՝ ներառյալ նշանակված **դեղամիջոցները և վիրակապային նյութերը,** որպես **ապահովագրված անձի** (անհրաժեշտության դեպքում՝ դոնորի) **Ապահովագրության պայմանագրով** սահմանված նախավիրահատական խնամքի մի մաս, եթե վերը նշված հոսպիտալացումից առաջ ապահովումը ցուցված է **Ապահովագրված անձի** (առկայության դեպքում՝ դոնորի) մասնագետի կողմից: **We** will pay for the costs of **treatment** provided on an **out-patien**t basis, including the cost of prescribed **drugs and dressings**, as part of the **insured person s** (and/or donor's, where relevant) specific pre-operative care arranged under the **Policy** where it is recommended by the **insured person s** (and/or

		donor's, where relevant) specialist as **medically necessary** for performing before hospitalisation. Տվյալ **ծառայությամբ** նախատեսված չէ **ամբուլատոր բուժման հատուցում**, եթե այդ ամբուլատոր բուժումը հանդիսանում է **Ձեր** հատուցվող **առողջական վիճակի** առաջնային բուժում: Այս **ծառայությունը** նախատեսված է միայն **ստացիոնար կամ ցերեկային ստացիոնար բուժմանը** նախորդող նախավիրահատական բուժման համար: This **benefit** does not **cover out-patient treatment** when **out-patient treatment** is the primary form of **treatment** for **your** eligible **medical condition.** This **benefit** is for pre-operative **treatment** prior to the **in-patient** or **day-patient treatment** plan only.
Հետվիրահատական ամբուլատոր բուժում (ներառյալ՝ մշտական բնակության երկրում, եթե պահանջվում է՝ վերադարձից հետո) **Post-operative out-patient treatment (including country of residence if required after coming back)**	Մինչև 90 օր Up to 90 days	**Մենք** հատուցելու ենք **ամբուլատոր բուժման** ծախսերը (խորհրդատվությունն ու ամբուլատոր բուժումն ամբողջությամբ, վիրաբույժների, թերապևտների խորհրդատվությունը, ախտորոշիչ հետազոտությունները, այդ թվում նաև ՀՏ և ՄՌՏ), այդ թվում նշանակված **դեղամիջոցները և վիրակապային նյութերը,** որպես **ապահովագրված անձի** (անհրաժեշտության դեպքում՝ դոնորի) հետվիրահատական խնամքի մաս, եթե վերը նշվածի ապահովումը հետվիրահատական շրջանում ցուցված է **Ապահովագրված անձի** (և անհրաժեշտության դեպքում՝ դոնորի) **մասնագետի կողմից՝** ապաքինման համար: **We** will pay for the costs of **treatment** provided on an **out-patien**t basis, (meaning consultation and out-patient treatment in full, consultations of surgeons, therapists, diagnostic studies, including CT and MRI,) including the cost of prescribed **drugs and dressings**, as part of the **insured person s** (and/or donor's, where relevant**)** specific post-operative care arranged under the **policy** where it is recommended by the **insured person s** (and/or donor's, where relevant**) specialis**t as **medically necessary** for recovery. Տվյալ **ծառայությամբ** նախատեսված չէ **ամբուլատոր բուժման հատուցում**, եթե այդ ամբուլատոր բուժումը հանդիսանում է **Ձեր** հատուցվող առողջական վիճակի առաջնային բուժում: Այս **ծառայությունը** նախատեսված է միայն **ստացիոնար կամ ցերեկային ստացիոնար բուժմանը** հաջորդող հետվիրահատական բուժման համար: This **benefit** does not **cover out-patient treatment** when **out-patient treatment** is the primary form of **treatment** for **your** eligible **medical condition.** This **benefit** is for post-operative **treatment** following the **in-patient** or **day-patient treatment** plan only. Այս **ծառայությունը** մատուցվելու է փոխհատուցման սկզբունքով. **ապահովագրված անձը** և, առկայության դեպքում, դոնորը պետք է վճարեն մշտական բնակության վայրում առաջացած ծախսերը, այնուհետև դիմեն համապատասխան ծախսերի փոխհատուցման համար՝ **Ապահովագրության պայմանագրի** համաձայն: This **benefit** will be provided on a reimbursement basis, meaning the **insured person**, or the donor (where applicable), will be required to pay for the costs incurred in the country of residence, and then seek reimbursement for eligible expenses under the **policy**.
Ուղևորության ծախսեր հետվիրահատական շրջանում ամբուլատոր բուժումը շարունակելու համար **Travel costs for post-operative out-**	Ուղևորության ծախսերի շրջանակներում՝ մինչև 60 օր Within travel cost limit up to 60 days	**Ապահովագրված անձի** կամ դոնորի (առկայության դեպքում) փոխադրման գծով ողջամիտ ծախսեր՝ տեղային տրանսպորտային միջոցներով հյուրանոցից, կամ **բուժումը** իրականացնող երկրում գտնվող բնակության այլ վայրից դեպի **բուժհաստատություն կամ ամբուլատոր բուժման հաստատություն՝ բուժման** հսկողության նպատակով այցելելու համար: Reasonable costs of an **insured person** or the donor (where applicable) to be transported by local transport from their hotel, or other place of residence in the country of **treatment** to the **hospital** or **out-patient** facility for follow-up **treatment**.

patient follow up treatment		
Բնակության երկրում բուժումը շարունակելու համար անհրաժեշտ դեղամիջոցներ (տվյալ ծառայությունը կիրառելի է բոլոր դեպքերի համար, բացառությամբ քաղցկեղի) **Follow up medication in home country (this benefit is applicable for all conditions other than cancer)**	€25,000	Բուժհաստատությունից դուրս գրվելուց և մշտական **բնակության երկրի բուժող բժշկի մոտ** վերադառնալուց հետո, **Ապահովագրության պայմանագրով կվճարվեն ապահովագրված անձի** կամ դոնորի (առկայության դեպքում) **բուժման** շարունակության համար անհրաժեշտ **դեղամիջոցների և վիրակապային նյութերի** համար՝ համաձայն **Ապահովագրության պայմանագրի**: Once **you** are formally discharged and referred back to **Home country medical practitioner, the Insurance** will pay for the cost of **drugs and dressings** required by the **insured person** or donor (where applicable) as a continuation of **treatment** arranged under the **policy.** Տվյալ **ծառայությունը** հասանելի է փոխհատուցման սկզբունքով, որի համաձայն դեղամիջոցները նշանակվում են **բուժող բժշկի/բժիշկ-մասնագետի** կողմից որպես բժշկական տեսանկյունից հետագա **բուժման** շարունակության **անհրաժեշտ**, դրանք պետք է թույլատրված, արտոնագրված և հասանելի լինեն **բնակության երկրում**, պայմանով, որ այդ դեղամիջոցները ենթակա չեն տրամադրման պետական պատվերի շրջանակներում կամ **ապահովագրված անձի** գծով առկա այլ **ապահովագրության պայմանագրի** հիման վրա: This **benefit** is provided on a reimbursement basis where the medication is recommended by **medical practitioner/specialist** as **medically necessary** for on-going **treatment**, it is approved, licensed and available in **the country of residence** and is not otherwise provided by the Public Health Service of Armenia or any other **policy** held by the **insured person**. Եթե **դեղամիջոցների և վիրակապային նյութերի** գծով ծախսերը մասամբ վճարվել են պետական պատվերի շրջանակներում կամ այլ **ապահովագրության պայմանագրի** հիման վրա, ապա **ապահովագրված անձը** պարտավոր է նշել այդ մասնակի վճարումների մասին հայտային դիմումի մեջ: If part of the cost of **drugs and dressings** has been funded by the Public Health Service of Armenia or another insurance **policy**, the **insured person** is obligated to identify these partial payments in their reimbursement claim. **Ապահովագրության Պայմանագրի** համաձայն հատուցման ենթակա չեն 90 օրը գերազանցող ընդունման ժամկետով դեղամիջոցների գծով ծախսերը: **The Policy** will not provide cover for follow up medication that exceeds consumption for longer than 90 days.
Հայրենադարձություն **Repatriation of mortal remains**	Ամբողջությամբ In full	**Մշտական բնակության երկրից** դուրս բուժվելու ընթացքում **Ապահովագրության պայմանագի** համաձայն ստացված **բուժման** արդյունքում **Ապահովագրված անձի** մահվան դեպքում նրա աճյունի փոխադրումը հետ **հայրենիք**: Transportation of mortal remains following death of an **insured person** whilst outside of their **country of residence**, whilst receiving **treatment** arranged under the **Policy** back to their **country of residence**.